

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, 341 էջ, գինը 1 ռ. 34 կ.:

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի քաղաքական և տնտեսական կյանքի պրոբլեմների ուսումնասիրությունը վերջին երկու տասնամյակում է, որ առանձին հետադոտողների ուշադրությանն է արժանացել: Սակայն այդ հետադոտողների ուշադրության կենտրոնում են եղել հիմնականում արևմտահայերի աղգային-աղատադրական պայքարը սուլթանական բռնապետության դեմ, քաղաքական կուսակցությունների և հասարակական հոսանքների հարցերը, տնտեսական վիճակը, օսմանյան կառավարության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի կառավարող շրջանների հետապնդած նպատակները այդ հարցում, հայկական հարցը ու մեծ պետությունների բռնած դիրքը և այլն:

Ընչ վերաբերում է ագրարային հարաբերությունների ուսումնասիրությանը, ապա այդ բավականին բարդ ու խճճված պրոբլեմը գրեթե չի ուսումնասիրված: Ահա այդ պրոբլեմի ուսումնասիրությանն է նվիրված Աղատ Համբարյանի աշխատությունը, որն ընդգրկում է կես դար՝ սկսած արևելյան պատերազմից (1853—1856 թթ.) մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Եա մի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովուրդն իր բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում սուլթանական ֆեոդալական բռնապետության կողմից շտեմնված հալածանքների, հարստահարության, աղգային ճնշման, տնտեսական քայքայման էր ենթարկվում:

Ա. Համբարյանի աշխատությունում քննարկված է նշված ժամանակաշրջանի ագրարային հարաբերություններին վերաբերող հարցերի մի ամբողջ կոմպլեքս՝ ագրարային հարաբերությունների բնութագրումը, թուրքական կառավարության ագրարային քաղաքականությունը և ֆեոդալների դասակարգը Արևմտյան Հայաստանում, գյուղացիների կատեգորիաները և նրանց ունեցվածքային շերտավորումը, ֆեոդալական հարկն ու ռենտան, պետական հարկերն ու պարհակները, արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակը, գյուղատնտեսության ապրանքային բնույթը, ագրարային հարաբերությունների ետաճումը, կալվածատիրական հողատիրության

ընդարձակումը, գյուղացիության կիսաճորտացումն ու ճորտացումը, ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո, ագրարային հարաբերությունների առանձնահատկությունները և ագրարային հարցի լուծման ուղիները Արևմտյան Հայաստանում և այլն:

Նշված հարցերը հեղինակը լուսարանել է բազմաթիվ արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև հայկական մամուլից քաղված հարուստ նյութերի հիման վրա: Նա օգտագործել է նաև իր թեմային վերաբերող հայերեն ու ռուսերեն դրականությունը: Փաստական նյութերի վրա աշխատելու ընթացքում հեղինակը մեծ ջանասիրությամբ քաղմաղան տվյալների համադրման ու վերլուծության միջոցով առանձնացրել է ամենահավաստի և իրականությանը մոտ փաստերը, մի բան, որ հատկապես կարևոր է այն տեսակետից, որ բռնապետական Թուրքիայի պայմաններում բաղմաթիվ պատմական փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ և այլ նյութեր քաղաքական նկատառումներից ելնելով աղավաղված են և արևմտահայ իրականությունը հետադոտողի համար չեն կարող հավաստի նյութ ծառայել՝ առանց խոր լաբորատոր հետադոտման:

Ա. Համբարյանի բերած փաստերի զգալի մասը նորություն է և բոլորովին նոր լուսարանում է տալիս հետազոտվող հարցերին:

Աշխատության «Ագրարային հարաբերությունների բնութագրումը» բաժնում հեղինակն ընդգրծում է, որ Օսմանյան կայսրությունը տիպիկ ռազմա-ֆեոդալական բռնապետություն էր: Թուրքական բռնապետությունն իր ամբողջ ժանրությամբ ընկած էր աշխատավոր մասսաների վրա, հեղինակն իրավացիորեն նշում է, որ «առանձնապես ծանր էր քրիստոնյաների դրությունը, որոնք բացի սոցիալական ճնշումներից, ենթարկվում էին նաև աղգային ու կրոնական հալածանքների: Թուրք բռնակալները քրիստոնյաներին գիտում էին որպես ղենքով նվաճված ստորադաս հպատակների, տալիս առյա անունը, ձգտում էին մահմեդականացնել նրանց» (էջ 26):

Լուսարանելով թուրքական սուլթանների հայահալած քաղաքականությունը և այդ կապակցությամբ շոշափելով քրդական շարժումների

քնութեան հարցը, Ա. Համբարյանը նշում է, որ թուրքական կառավարութիւնը քրդական շարժումներին տալիս էր հակահայկական ուղղութիւն: Իր այս թեզը հիմնավորելու համար նա բերում է 1880 թ. նոյեմբերի 20-ին Վանի ուսական փոխհյուպատոսի պաշտոնակատարի հաղորդումը, ներկայացված Կ. Պոլսի ուսական ղեկավարին. «Ինձ հասած բոլոր տեղեկութիւններէն կարելի է եզրակացնել.— գրում է փոխհյուպատոսը,— որ թուրքական կառավարութիւնը բոլորէ է զաղտնի կերպով ղեկավարել Ուրեյղ-Ուսայի ապստամբութիւնը, տալով նրան Թուրքիայի շահերին համապատասխան ուղղութիւն: Իսկ նրա շահն Անատոլիայում... հանդիսանում է... քրիստոնյաների ճշումը, հատկապէս հայկական հարցի արմատական բնաջնջումը»: Այդ իսկ նպատակով թուրքական կառավարութիւնը զենք է բաժանում քրդերին և «խրախուսում է քրդերի մեջ երևան եկած ներկայիս շարժումը» (էջ 32): Թուրքական կառավարութիւնն իր հայաջինջ քաղաքականութիւնն իրագործելու համար ձեռնարկեց նաև քրդական ցեղապետների ղեկավարութեամբ «համիդիական զնդեր» կազմակերպելու դործը: Արյունարբու սուլթան Արզու Համիդի վարած այդ քաղաքականութիւնը թշնամութիւն էր սերմանում քուրդ և հայ ժողովուրդների միջև և նրանց իրար դեմ հանում:

Խոսելով Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կառավարող շրջանների անցկացրած վարչական փոփոխութիւնների մասին, հեղինակը ճիշտ կերպով եզրահանգում է, որ այդ փոփոխութիւնները հետապնդում էին մի նպատակ՝ ապահովել ազգաբնակչության մահմեդական տարրի գերակշռութիւնը: Այս կապակցութեամբ նա կանգ է առնում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության կազմի հարցի վրա: Հայտնի է, որ այդ հարցը մինչև օրս էլ բավարար չափով չի լուսարանված մեր պատմագրութեան մեջ, չնայած Արևմտյան Հայաստանի պատմութեամբ զբաղվող հետազոտողները իրենց աշխատութիւններում անդրադարձել են դրան: Գրախոսվող աշխատութեան հեղինակը ևս այս խնդրի լուսարանման գործում մեզ անհայտ տվյալներ չի բերում և հետևապէս չի էլ հանգում նոր եզրակացութիւնների: Սա, իհարկե, նրա մեղքը չէ, Հայտնի է, որ Օսմանյան կայսրութիւնում չի տարվել գիտական հիմունքներով կազմված մարդահամար: Արխիվային փաստաթղթերում, մամուլում, հալերեն, ռուսերեն և օտար լեզվով գրականութեան մեջ հետազոտողը հանդիպում է միմյանց հակասող թվական տվյալների: Քիչ թե շատ պատկերացում կազմելու համար հարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել հայերի քանակին վերաբերող բոլոր տվյալները և բաղադրման մեթոդով պարզել, թեկուզ մոտավոր ճշտութեամբ,

Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև ամբողջ Թուրքիայի հայ ազգաբնակչության ընդհանուր թիվը և նրա տոկոսային հարաբերութիւնը մյուս ազգութիւնների նկատմամբ՝ Արևմտյան Հայաստանում:

Հեղինակը համառոտակի լուսարանել է թուրքական կառավարութեան քաղաքականութիւնը՝ սկսած Փոքր Ասիայում թուրք զավթիչների տիրապետութեան ստեղծումից մինչև XIX դարի կեսերը: Ինչպես հայտնի է, մուսուլմանական երկրներում, այդ թվում և Օսմանյան կայսրութիւնում, հողը իրավաբանորեն պատկանում է աստծուն, իսկ երկրում՝ նրան փոխարինող սուլթանին: Ա. Համբարյանը այս կապակցութեամբ բերում է Մարքսի հայտնի դրույթն այն մասին, որ Արևելքում հողի գերագույն սեփականատերը պետութիւնն է, «դերձխանութիւնն այնտեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականութիւնն է»: «Բայց այս դեպքում,— շարունակում է Մարքսը,— ոչ մի մասնավոր հողային սեփականութիւն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրումն ու օգտագործումը» (էջ 48): Թուրքական սուլթաններն իրենց համարելով զավթած հողերի գերագույն սեփականատերը, հողը տալիս էին սիփահներին՝ զինվորներին: Հող ստացած սիփահները, ըստ ստացած հողի չափի, կոչվում էին զիամետներ և թիմարիոտներ և պարտավոր էին հարկ տալ պետութեանը և որոշակի թվով զինվորներ՝ սուլթանի բանակին:

Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես սիփահները, հետագայում դառնալով խոշոր հողատերեր, իրենց հերթին պահում էին վասալներ և լենի սկզբունքով նրանց տիրութիւններ տալիս: Ուստի լենը,— եզրահանգում է Ա. Համբարյանը,— ինչպես միջնադարի շատ երկրներում, նույնպես և Թուրքիայում հանդիսանում էր մի կարևոր էտապ ֆեոդալական հարաբերութիւնների կազմավորման պրոցեսում. նրա շրջանորհիվ ֆեոդալների դասակարգի ներսում ձևավորվում էին հողային հարաբերութիւնները և ստեղծվում էր հողային սեփականութեան հիերարխիայի կառուցվածքը» (էջ 49):

Թուրքական սուլթանները նվաճած հողերի մի մասն էլ տալիս էին կրոնական հաստատութիւններին: Հողատիրութեան այդ ձևը կոչվում էր վակուֆային, որը XVII—XVIII դարերում, ինչպես ճիշտ եզրակացնում է Ա. Համբարյանը, «ընդգրկեց Թուրքիայի հողերի զգալի մասը» (էջ 49):

Խոսելով 1834 թ. սուլթան Մահմուդ II-ի կողմից ռազմա-լենային հողատիրութեան կամ դերերեյութեան վերացման և շիֆթիքային հողատիրութեան ստեղծման մասին, հեղինակը ոչինչ

չի ասում գերերեյություն վերացման պատճառների մասին (էջ 49)։ Մինչդեռ հարկ էր նշել, որ XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունը քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում։ Դերերեյությունը կամ ուղիղ-մալենային հողատիրությունը այլևս իրեն չէր արդարացնում։ Դերերեյները, որոնք առաջնորդում հանդիսանում էին սուլթանական ռազմական ուժի հիմնական գործոնը, XVІІІ—XІX դարերում ձգտում էին դուրս դալ կենտրոնական իշխանության ենթակայությունից և դառնալ ինքնուրույն տիրակալներ իրենց կալվածքներում։ Սուլթան Մահմուդ II-ը, ցանկանալով ուժեղացնել կենտրոնական իշխանության ազդեցությունը՝ շղկայսրության սահմաններում, որոշեց վերջ տալ դերերեյներին՝ որպես կենտրոնախույս ուժի։ Սուլթան Մահմուդ II-ի հաջորդ Աբդուլ-Մեջիդը, շարունակելով նրա քաղաքականությունը, 1840-ական թթ. ջարդեց դերերեյներին՝ հատկապես Սրեմտյան Հայաստանում։

Հարկ էր, որպեսզի հեղինակը ասեր իր խոսքը, ընդհանրապես սուլթանների ձեռքով կատարված այդ միջոցառումները, Հատկապես հարկավոր էր ընդգծել, թե դերերեյության վերացումը ինչպիսի հետևանք ունեցավ Արևմտյան Հայաստանում, որտեղ դերերեյությունն ավելի ուժեղ էր և մեծագույն շարիք էր հայ գյուղացիության համար։

Ռադմալենային հողատիրությունը վերացնելուց հետո ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Օսմանյան կայսրության մյուս մասերում, 1858 թ. հողային օրենքի հիման վրա գոյություն ունեին տարբեր կատեգորիայի հողեր։ Միմյան պետական հողեր, արազի մեվչուֆե, վակուֆ՝ մուսուլմանական հոգևորականների և մզկիթների հողեր, մյուսը՝ մասնավոր սեփականատերերի հողեր, արաղի-մեթրուկե՝ հասարակական օգտագործման հողեր և արաղի-մեվաթ, Ա. Համբարյանը հանգամանորեն, մեկ առ մեկ բնութագրում է այդ կատեգորիաների հողերը և հանգում է, մեր կարծիքով, ճիշտ եզրույթության, որ 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքը անխախտ թողեց Թուրքիայում գոյություն ունեցող պետական, կալվածատիրական ու կրոնական հողատիրության ձևերը, իսկ աշխատավոր գյուղացիությանը շրջափարակ հողով։ Ավելին, այն հնարավորություն ստեղծեց հողատերերի համար բնագրավելու գյուղացիների հանդակները, ինչպես այնուամենայնիվ, 1858 թ. ապրիլի 21-ի հողային օրենքի բուրժուական բովանդակությունն ականջատ էր. այն փաստորեն չի դարձրեց պետության ունեցած գերագույն իրավունքը հողի նկատմամբ, երբ հաստատեց, իրավապես ճանաչեց կալվածատերերի շիֆթլիքային ու գյուղացիների ծխային հողատիրու-

թյունը և թույլ տվեց նրանց վաճառել ու դնել իրենց հանդակները որպես մասնավոր սեփականություն» (էջ 53—54)։

1867 թ. մայիսի 21-ին սուլթան Աբդուլ-Ազիզի կողմից հրապարակվեց հողային մի այլ օրենք, որով գյուղացիներին պարտադրվեց ձեռնարկել իրենց հողակտորները թափուով, այսինքն փրկագանել դրանք՝ վճարելով տարեկան եկամտի 15 տոկոսը։ Աշխատության հեղինակը իրավացիորեն նշում է, որ թեև դրանով կառավարությունը հետապնդում էր ֆիսկալ նպատակներ, այնուամենայնիվ հողային այդ օրենքը նույնպես ուներ բուրժուական բովանդակություն (էջ 54)։

Սակայն ի՞նչ տվեց հողային այդ ոեֆորմը Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիությանը, ապահովե՞ց արդյոք նրան հողով։ Հեղինակի բերած փաստական նյութից երևում է, որ թափուով հայերի մի մասը ձեռք բերեց հող կաս իր դարերով մշակած հողը թափուով ձեռքբերեց որպես սեփականություն։ Սակայն սակավահող կամ բոլորովին հողազուրկ գյուղացիների տոկոսը ավելին էր, քան հողով ապահովված գյուղացիներին։

Ուշադրության արժանի է մենագրության այն բաժինը, որտեղ հեղինակը խոսում է ֆեոդալական դասակարգի մասին, շեշտելով, որ Արևմտյան Հայաստանում ֆեոդալական վերնախավը բաղկացած էր մեծ մասամբ քրդերից ու թուրքերից և մասամբ էլ հայերից ու ասորիներից։ Քուրդ հողատերերը, — գրում է նա, — հաստատված էին Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում, թուրքերը գերազանցապես Սեբաստիայի, Խարբերդի, Կարնո, ինչպես և մասամբ մյուս վիլայեթներում, ասորիները՝ Վանի վիլայեթի Հեքյարի սանջակում, իսկ հայերը՝ Խարբերդի, Վանի և Տիգրանակերտի վիլայեթների որոշ կազաններում» (էջ 56—57)։

Կոնկրետ փաստերով հեղինակը ցույց է տալիս, որ կալվածատերերի տնտեսությունը զրտնրվում էր ֆեոդալական զարգացման տարբեր աստիճանի վրա և գերիշխողը ֆեոդալիզմի զարգացած և վերջնական փուլի տնտեսաձևն էր։

Աշխատության հաջորդված բաժիններից է գյուղացիների կատեգորիաները և ունեցվածքային շերտավորումը։ Ա. Համբարյանը բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանում է, որ Արևմտյան Հայաստանի գյուղացիները ըստ սոցիալական դրության բաժանվում էին հետևյալ կատեգորիաների՝ ազատների, բատրակների, ֆեոդալական կախյալ գյուղացիների և ստրուկների։ Նշված կատեգորիաներից ամենաբազմաքանակը ֆեոդալական կախյալ գյուղացիներն էին (այսինքն՝ կիսրարները, հարկատուներն ու ճորտերը), ապա ազատները, իսկ

բատրակները և մանավանդ ստրուկները շատ քիչ էին (էջ 76):

Մենագրության մեջ հանգամանորեն լուսարանված են ֆեոդալական հարկն ու ունեւան: Հեղինակը ելակետ է ընդունում լենինի հայտնի այն դրույթը, որ «Լեք կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում: Հետևաբար, անհրաժեշտ է «արտատնտեսական հարկադրանք», ինչպես ասում է Մարքսը այդ տնտեսական ուժի մը ընդունելիս» (Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 224):

Աշխատությունում ցույց են տրված աղաների և բեյերի հարկհավաքման ձևերը, որոնք հիմնականում թալանչիական արշավանքների բնույթ էին կրում: Հեղինակը բացահայտել է նաև ֆեոդալական ունեւանի երեք ձևերը՝ աշխատավճար, արգյունավճարը և գրամավճարը: Կոնկրետ փաստերով պարզաբանվում է, որ քոչվոր կամ կիսաքոչվոր հողատերի մոտ տիրապետողը արգյունավճար ունեւան էր: Սեփական տնտեսություն վարող աղաների մոտ արգյունավճար ունեւան կազմում էր 53,5 տոկոս, աշխատավճարը՝ 45,3 տոկոս, իսկ գրամավճարը՝ 1,2 տոկոս: «Դրամական ունեւանի աննշան զարգացումը, — եզրահանգում է հեղինակը, — պայմանավորված էր երկրում ապրանքա-դրամական հարաբերությունների թույլ զարգացումով» (էջ 99):

Ա. Համբարյանը գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային նոր նյութեր, լուսարանում է թուրքական կառավարության հարկային քաղաքականությունը, որը կազմում էր օսմանյան կառավարության ագրարային քաղաքականության անբաժանելի մասը:

Հետազոտելով թուրքական կառավարության հարկային քաղաքականությունը, հեղինակը ընդգծում է, որ XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին այն ավելի կեղեքիչ դարձավ: «Այդ պայմանավորված էր մի կողմից՝ Թուրքիայի վերածումով եվրոպական պետությունների կիսազաղութի, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականությանը» (էջ 123):

Ուշադրության արժանի է աշխատության «Արևմտյան Հայաստանի տնտեսությունը» բաժինը, որտեղ փաստական հարուստ նյութի հիման վրա լուսարանված է իմպերիալիստական պետությունների գաղութային և թուրքական կառավարության տնտեսական քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Ա. Համբարյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս իմպերիալիստական պետությունների

մրցությունը Արևմտյան Հայաստանում, նրանց գաղութարարական քաղաքականության հետադիմական հետևանքները: Նա միաժամանակ լուսարանում է թուրքական կառավարության վարած քաղաքականությունը, նրա կործանարար հետևանքները Արևմտյան Հայաստանում:

Զափազանց արժեքավոր է մենագրության «Գյուղատնտեսությունը» ենթաբաժինը: Այստեղ հեղինակը փաստական նյութերի հիման վրա խերկայացրել է Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության ընդհանուր վիճակը, մշակման ենթակա հողերի տոկոսը ըստ վիլայեթների, գյուղատնտեսության առանձին ճյուղերի պատկերը և տեսակարար կշիռը տնտեսության մեջ: Մանրամասն քննության առնելով գյուղատնտեսության ապրանքային բնույթի խնդիրը, նա հանգում է այն եզրակացության, որ «Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը դեռ քիչ էր ներգրավված շուկայական հարաբերությունների մեջ, իսկ որոշ շրջաններ անգամ հեռու էին կանգնած դրանից: Այդ պատճառով էլ երկրում բնատնտեսությունը ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի սկզբին տակավին մեծ դեր էր խաղում» (էջ 180):

Հեղինակը հատուկ ենթադիտում հետազոտել է նաև արդյունաբերության վիճակը Արևմտյան Հայաստանում: Նրա բերած բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ Արևմտյան Հայաստանում քաղաքային բնակչությունը (որը կազմում էր ամբողջ ազգաբնակչության մոտ 10 տոկոսը) ըզրադվում էր արդյունաբերության տարբեր ձևերով, որոնցից մեկն արհեստն էր: «Հայ արհեստավորները, — գրում է Ա. Համբարյանը, — մի շարք տեղերում իրենց արհեստները հասցրել էին կատարելագործության... Հայ վարպետներն իրենց շինվածքներով ու գործվածքներով մասնակցում էին համաշխարհային կամ ծայրերկրային ցուցահանդեսներին և շահում մրցանակներ» (էջ 181—182): Արհեստավորների մի մասը համախմբված էր էսնաֆություններում, իսկ մյուս մասը բանում էր միայնակ: Նա իրավացիորեն նշում է, որ էսնաֆություններն, ըստ էության, նույնն էին, ինչ համքարությունները միջնադարյան Եվրոպայում: Պրանցում համախմբված էին միատեսակ արհեստի ներկայացուցիչները: Հայտնի է, որ համքարությունը իր օրենքներով կաշկանդում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումը: «Համքարային կազմակերպությունը, — գրել է Մարքսը, — բացառում էր աշխատանքի մանուֆակտուրային բաժանման հնարավորությունը» (Վ. Մարքս, Կապիտալ, I, էջ 378):

Արևմտյան Հայաստանում գոյություն ունեւ նաև արդյունաբերության համեմատաբար ավելի բարձր ձև, դա ապրանքային արտադրությունն

Քրոնիկաների բերած փաստերը ցույց են տալիս, որ մանր արտադրողների միջև, ուսումնասիրվող շրջանում, գոյություն ունեւ ունեցվածքային շերտավորում, որոշ տեղերում այն վեր էր ածվում կապիտալիստական հարաբերությունների, որի հետևանքով արդյունաբերության մեջ գոյություն ունեցող արհեստային և մանր ապրանքային ձևերի կողքին առաջ էր գալիս մանուֆակտուրային ձևը (էջ 185)։

Մենագրությունում սկզբնաղբյուրներից քաղված հարուստ փաստերը հաստատում են հեղինակի այն կարևոր թեզը, թե «XIX դարի վերջին քառորդում Արևմտյան Հայաստանի արդյունաբերության որոշ ճյուղեր կապիտալիզմի մանուֆակտուրային ստադիայից անցնում են գործարանային ստադիայի» (էջ 194)։

Սակայն, ինչպես ճիշտ եզրակացնում է նա, Արևմտյան Հայաստանում մանուֆակտուրան գտնվում էր առավելապես իր սաղմնային վիճակում և շատ հեռու էր արտադրության ֆեոդալական եղանակը կապիտալիստականով փոխարինելուց։

Աշխատության վերջին՝ «Ազրարային հարաբերությունների ետաճումը» բաժնում հեղինակը հետազոտել է կալվածատիրական հողատիրության ընդարձակումը Արդուլ Համիդի սուլթանության տարիներին, գյուղացիության կիսաճորտացումն ու ճորտացումը, ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո և, վերջապես, ազրարային հարաբերությունների առանձնահատկությունները և ազրարային հարցի լուծման ուղիներն Արևմտյան Հայաստանում։

Սրանք են այն հարցերը, որոնք լուսարանված են Ա. Համբարյանի մենագրությունում։ Աշխատությունում քննարկվող հարցերի մեծ մասը առաջին անգամ է, որ արծարծվում է մեր պատմագիտական գրականության մեջ։ Հեղինակը մարքսիստական դիրքերից լուսարանում է մի այնպիսի կարևոր, բարդ և շատ քիչ ուսումնասիրված խնդիր, ինչպիսին է ազրարային հարաբերությունների հարցը Արևմտյան Հայաստանում (1856—1914)։

Սակայն Ա. Համբարյանի հետազոտությունը գերծ չէ նաև թերություններից և ոչ ճիշտ գրույթներից, որոնցից մի քանիսի վրա հարկ ենք համարում կանգ առնել։

1. Աղբյուրների և գրականության տեսության բաժնում նա չի օգտագործել իր թեմայի վերաբերյալ օտար լեզուներով գոյություն ունեցող հարուստ գրականությունը, որի օգտագործումից աշխատությունը միայն կշահեր։ Նույն բաժնում հեղինակը շատ համառոտակի նշում է պրոֆ Ա. Ֆ. Միլլերի «50-летие младотурецкой революции» 17 հանդես, № 1

ЛЮДИ» գաղափարությունում տեղ գտած սխալները։ Զգիտես ինչու, Ա. Համբարյանը լուծյամբ անցնում է Միլլերի «Краткий очерк истории Турции» և «Очерки новейшей Турции» ծավալուն աշխատությունների կողքով։ Մինչդեռ այդ գրքերում Միլլերը թույլ է տվել լուրջ սխալներ, որոնց մասին ժամանակին գրվել է միութենական ակադեմիայի հեղինակավոր ամսագրերում։

Հեղինակն իր աշխատությունում պիտի անդրադառնար նաև 30-ական թթ. Մոսկվայում և լենինդրագում այսպես կոչված «Ասիական արտադրական եղանակի» հարցի շուրջը տեղի ունեցած բանավեճին։ Այդ տարիներին լույս տեսան մի շարք աշխատություններ (Բերին, «Об азиатском способе производства», Л., 1930, Դուբրովսկի, «К вопросу о сущности азиатского способа производства, феодализма, крепостничества и торгового капитала», Л., 1932 г., պրոֆեսորներ Կոդեսի և Կոկինի ուսումնասիրությունները), որոնք նվիրված էին հիշյալ հարցին։ Թվարկած մենագրություններում, որոնց շուրջը և ընթանում էր բանավեճը, անց էր կացվում այն հիմնական միտքը, որ ինչպես առհասարակ ասիական, այնպես էլ Օսմանյան կայսրությունում, հետևապես և Արևմտյան Հայաստանում, ֆեոդալական կարգեր և ճորտատիրություն գոյություն չեն ունեցել, այլ գոյություն է ունեցել մի ինչ-որ, այսպես կոչված, հատուկ ասիական արտադրանեղանակ։ Այդ հեղինակները ելնում էին այն բանից, որ Թուրքիան, որպես մոսուլմանական երկիր, որտեղ հողն իրավաբանորեն պատկանում էր ասթոն, իսկ երկրում՝ նրան փոխարինող սուլթանին, չկար հողի մասնավոր սեփականություն, հետևապես և չէին կարող գոյություն ունենալ ֆեոդալական դասակարգ և ճորտատիրություն։

Ասիական հատուկ արտադրանեղանակի կողմնակիցները ելնում էին Մարքսի այն գրույթից, որ Արևելքում հողի գերագույն սեփականատերս պետությունն է։ «Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրումն ու օգտագործումը» (Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս 2-րդ, էջ 329)։

Ինչպես տեսնում ենք, հիշատակված բանավեճը նվիրված էր շատ կարևոր խնդրի՝ ասիական երկրներում, այդ թվում նաև Թուրքիայում, ֆեոդալիզմի, որպես հասարակական ֆորմացիայի, ժխտմանը։ Անհրաժեշտ է, որ Ա. Համբարյանը ցույց տար իր վերաբերմունքը այդ հարցին։

2. Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում հեղինակը լուսարանում է ավելի քրդական ընկերի և աղաների ևամայականություններով, նրանց կողմից բռնություն և ուժի տիրապետությամբ հայ գյուղացու վզին փաթաթած անօրինական պարտադրություններով, քան թուրքական կառավարության կողմից վարած ազրարային քաղաքականությունով, որի մասին նա խոսում է ընդհանրապես (տե՛ս էջ 47—68)։ Մինչդեռ հայտնի է, որ թուրքական կառավարությունն իր ազրարային քաղաքականությամբ, հայկական հողերի մասսայական բռնազրավումների և հարկային սխտեմի շտեմարված ճնշման միջոցով, ձգտում էր Արևմտյան Հայաստանի տնտեսական քայքայմանը, որը նպաստում էր Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելու քաղաքական ծրագրի իրագործմանը։

3. Հեղինակը չի բացատրում թուրքական կառավարության հայատյաց քաղաքականության ուժեղացման պատճառները XIX դարի երկրորդ կեսին։ Ինչպես հայտնի է, XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրության եվրոպական մասում տեղի են ունեցել հույների և սերբերի ազգային-ազատագրական շարժումները, որոնք վերջացան նրանց լիակատար ազատագրումով օսմանյան լծից։ Այդ լծից XIX դարի 70-ական թթ. ազատագրվեցին նաև բալկանյան մի շարք ժողովուրդներ։ Օսմանյան կառավարությունը, վախենալով հետագա ազգային-ազատագրական շարժումներից, վճռական միջոցներ է ձևառնում իր հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ և առաջին հերթին՝ հայերի, որովհետև հենց XIX դարի երկրորդ կեսից Արևմտյան Հայաստանում նոր թափ է ստանում ազգային-ազատագրական շարժումը, որի հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր։ Անհրաժեշտ էր ճնշել այդ ազգային-ազատագրական շարժումը, որը միևնույն ժամանակ ուղղված էր նաև ֆեոդալական կարգերի և ֆեոդալական շահագործման դեմ, հետևապես և սուլթանի, որպես ամբողջ այդ սխտեմը գլխավորողի։

Դրա հետ միասին, թուրքական նորածին առևարա-արդյունաբերական բուրժուազիան ի վիճակի չէր մրցել հայ և քրիստոնյա ուրիշ ազգերի բուրժուազիայի հետ։ Այդ պատճառով թուրքական ազգային բուրժուազիան, որն արդեն որոշ դիրք էր գրավել երկրի տնտեսության մեջ, պայքարում էր իր այդ դիրքը և միաժամանակ կայսրության ամբողջությունը պահպանելու և ուժեղացնելու համար։ Իր քաղաքականությունը հայերի նկատմամբ իրագործելու նպատակով թուրքական կառավարությունը հենվում էր քրդական բնյերի վրա։ Հայտնի է, որ 40—50-ական թթ. թուրքական կառավարությանը հաջողվեց հնազանդեցնել քրդական ցեղերը և օգտագործելով

նրանց, կառավարությունն ամեն կերպ աշխատում էր ոչնչացնել հայերին։

Եվ, վերջապես, հայերի նկատմամբ ճնշում ուժեղացնելը կապված էր XIX դարի երկրորդ կեսին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի էքսպանսիայի ուժեղացման հետ։ Եվրոպական պետությունները Թուրքիայի համար մզված պայքարում նպատակ ունեին ուժեղացնել իրենց քաղաքական դիրքը և ձեռք բերել նոր հնարավորություններ՝ օսմանյան պետության ներքին քաղաքական կյանքի վրա ազդելու համար։ Այդ պայքարում նրանք օգտագործում էին Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների ազգային-ազատագրական շարժումը, հանդես գալով նրանց «պաշտպանների» դերում։ Միաժամանակ, դա չէր խանգարում նույն պետություններին դուրս գալ Օսմանյան կայսրության մեջ բնակվող ազգային փոքրամասնությունների դեմ այն ժամանակ, երբ վերջիններս փորձում էին հեղափոխական ճանապարհով ազատվել օսմանյան տիրապետությունից։ Դա բացատրվում էր նրանով, որ ճնշված ժողովուրդների իսկական ազատագրումը օսմանյան տիրապետությունից եվրոպական պետությունների ձեռքից խլում էր այն ուժեղ զենքը, որի միջոցով նրանք, ելնելով իրենց շահերից, ազդում էին Թուրքիայի քաղաքականության վրա։

Սրանք են հիմնականում այն ներքին և արտաքին պատճառները, որոնցից ելնելով, սուլթանական կառավարությունը կիրառում էր Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականությունը։ Դա Թուրքիայի քաղաքական ծրագիրն էր, որի հիմքում դրված էր ազրարային քաղաքականությունը։

4. Համոզիչ չէ հեղինակի այն հիմնական թեզը, թե իբրև XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում ֆեոդալական կարգերն ավելի են ուժեղանում, որի հետևանքով հայ գյուղացին կիսաճորտացվում ու ճորտացվում է։ Այդ դեպքում հարց է ծագում՝ ինչպե՞ս է, որ ճորտատիրական կարգերում հայ ճորտ գյուղացին ուզած ժամանակ դիմում էր պանդխտության կամ բուլբուլին թողնում էր իր հայրենիքը և տեղափոխվում ուրիշ երկրներ՝ բնակություն հաստատելու։ Արեւմտահայ հրապարակախոս Իյուզանդ Քեչյանը ժամանակին գրել է. «...դարեր շարունակ կատարվում էր Թուրքիայի հայկական գյուղերի քայքայումը. հայերին հողագուրկ անելու միջոցով, հիմք ունենալով բռնությունը որպես մշտական գործող օրենք, այդ հողագրկումը Հայաստանի ազգաբնակչությունը քշել է աշխարհի բոլոր ծայրերը»։ Այդ մասին է գրել նաև Միքայել Նալբանդյանը իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ։ «Ազդը օրըստօրեն

թողնում է իր երկիրը և կենտրոնանում է քաղաքներում,— գրել է Նալբանդյանը։— Աղքատությունը ստիպում է նորան թողնել յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և ղնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար» (Մ. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Լիրևան, 1930, էջ 73)։

Նշած փաստերը խոսում են այն մասին, որ հայերի մասսայական հողազրկման քաղաքականությունը ոչ թե հետապնդում էր հայ գյուղացու ճորտացումը, ինչպես կարծում է Ա. Համբարյանը, այլ նպատակ ուներ ընչադուրկ անել նրան, ստիպել, որ նա թողնի իր հայրենիքը, որպեսզի հայկական նահանգները բնակեցվեն թուրքերով։ Դրանով թուրքական կառավարությունը ձգտում էր վերջնականապես խեղդել հայերի ազգային-ազատագրական շարժումը։ Այդ քաղաքականությամբ Թուրքիան ձգտում էր հասնել մի երկրորդ քաղաքական նպատակի՝ իր նվաճողական պանթուրքական պլանների իրագործման ճանապարհին հայ ժողովրդին ենթարկել ֆիզիկական բնաջնջման և ամրացնել արևելյան ճակատը ընդդեմ Ռուսաստանի։ Մյուս կողմից էլ հայկական հարցը թուրքական եղանակով լուծելու միջոցով վերջ տալ մեծ տերություններին

միջամտություններին Թուրքիայի ներքին գործերին։

Այս հիմնական պատճառներով է, մեր կարծիքով, բացատրվում հայերի մասսայական հողազրկումը թուրք և քուրդ աղաների և բեյերի միջոցով ու մուսուլմանների ներգաղթի ուժեղացումը դեպի հայկական վիլայեթները։

5. Մեր կարծիքով սխալ է հեղինակի նաև հետևյալ թեզը, թե իբր «...ազգային բուրժուական կուսակցությունները... ոչ միայն շխանգարեցին, այլ օգնեցին Արդուլ Համիդին ազգային-ազատագրական շարժումները ճնշելու գործում» (էջ 35)։ Հստ Համբարյանի ստացվում է, որ նոր ազգային կուսակցությունները, որոնք գլխավորում էին իրենց ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրք բռնապետությունից ազատագրվելու համար, իրականում օգնում էին սրբազան Արդուլ Համիդին խեղդելու ազգային-ազատագրական շարժումները։ Իհարկե, սրա հետ համաձայնվել չի կարելի։

Գրախոսվող մենագրությունը լուրջ գիտական ուսումնասիրություն է, շարադրված մաքս-լենինյան մեթոդով հիմունքներով, և մեր դիտողությունները, որոնց մի մասը կրում է գիտական վեճի բնույթ, բոլորովին էլ չեն նսեմացնում նրա արժանիքները։

Պրոֆ. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

М. А. ЗАБОРОВ. Введение в историографию крестовых походов
(Латинская хронография XI—XIII веков). М., 1966, 381 стр.,
цена 1 р. 69 коп.

Монография о латинской хронографии эпохи крестовых походов написана автором популярных книг о движении крестоносцев и целого ряда статей об историографии этих войн.

По изложению их истории, данному М. А. Заборовым, эти походы явились результатом политики римского престола, стремившегося к определенным политическим целям. Экономические, социальные и психологические условия эпохи оказываются не более, чем фоном и проявлением и действии этого основного фактора движения крестоносцев¹. На взгляды автора о роли папства в этих войнах, по-видимому, оказали влияние представления о политике римских первосвященников, имевшие широкое хождение в период, когда М. А. Заборов писал свою книгу об истории крестовых

походов. С того времени римские папы неоднократно выступали в качестве сторонников мирной внешней политики в современных условиях и высказывались против агрессии.

В книге «Папство и крестовые походы», опубликованной в 1960 г., автор с несколько большей определенностью указал на значение социально-экономических условий в причинах крестовых походов и усилил этот фактор в его соотношении с политикой Рима². Тем не менее в его представлениях политика папства остается решающим фактором в причинах крестовых походов (стр. 181 и сл.).

В статьях М. А. Заборова об историографии крестовых походов значительное место занимает рассмотрение взглядов историков на причины этих войн. Однако он не дал

¹ М. А. Заборов. Крестовые походы, М., 1956, стр. 32 и сл.

² М. А. Заборов. Папство и крестовые походы, М., 1960, стр. 11 и сл.